

ՊԱԽՐԱ

*Խօսք՝ Գուսան Աշոտ
Երաշտ.՝ Յ. Պատալեան*

Մեր մով սարերում, ամրան առաւօտ,
Մի պախրա տեսայ կաթնաղբիւրի մօտ,
Իջել էր ձորը, մթին անտառից,
Ու ջուր էր խմում գուլալ աղբիւրից:

Իրեն տեսել էր, ջրի հայելում,
Սարերի անուշ բոյրն էր վայելում,
Արդեօք խմու՞մ էր, թէ համբուրում էր,
Իր տեսքով տարուած գուցէ հարբում էր:

Ասի՛ այ պախրա, մեր այս լեռներում,
Ես եար եմ կորցրել, նա էլ չի երեւում,
Իջել է ձորը մեղմիկ նազելով,
Գառնուկներին հետ, ջրին վազելով:

Իրեն տեսել էր, ջրի հայելում,
Սարերի անուշ բոյրն էր վայելում,
Արդեօք խմու՞մ էր, թէ հարբենում էր,
Իր տեսքով տարուած գուցէ հարբում էր:

Ասի Աշոտն եմ, աղաչում եմ քեզ,
Իմ կորած եարից թէ խաբար բերես,
Ոչ մի որսկանի գնդակ չի առնի՛
Ոչ քո սիրածին, ոչ քո ձագերին:

Իրեն տեսել էր, ջրի հայելում,
Սարերի անուշ բոյրն էր վայելում,
Արդեօք խմու՞մ էր, թէ հարբենում էր,
Իր տեսքով տարուած գուցէ հարբում էր: